Գուրգեն Մահարի

Ծաղկած փշալարեր

8

. . . Այո, ակներև է, Մամոն այսօր մտահոգ է: Նա մի քանի անգամ գաղտագողի նայեց գերմանուհու կողմը, որն զբաղված էր մի կտոր կավ ձեռքով նորից ու նորից տրորելով, մշակելով, վերամշակելով: Աստծուն է միայն հայտնի, թե այս անգամ ում շնչով պիտի կենդանացնի անշունչ կավը, աստծուն և իրեն: Երբ աշխատանքը քիչ թե շատ առաջ էր գնում, Իոնասն էր առաջինը, որ գլխի էր ընկնում, թե ում վրա է աշխատում նա: Մի անգամ միայն ընկավ նեղ դրության մեջ . նա ոչ միայն չիմացավ՝ երբ աշխատանքը բավականին առաջ էր գնացել, այլև ուսերը թոթվեց, երբ աշխատանքն ավարտված էր, — արտիստական, համակրելի դիմագծերով մի երիտասարդի գլուխ՝ Մայակովսկու ծնոտով:

— Իմ ընկերներից մեկն է, — բացատրեց Լյուդմիլան:

— Նկարի՞չ, — հարցրեց Իոնասը:

— Ոչ, նա նկարիչ չէր, — պատասխանեց գերմանուհին, հետո լռեց և ավելացրեց, — նա արվեստի . . . երկրպագու էր:

Ամեն անգամ երբ Լյուդմիլան ավարտում էր հերթական աշխատանքը, Մամոն իր մայրենի լեզվով դիմում էր Աշոտ դայուն:

— Դոստ ադամ դըր, — բարեկամ մարդ է . . .

Մամոն մի կասկածելի, համարյա թշնամական հայացք նետեց Լյուդմիլայի «դոստի» վրա և այլևս այն կողմը չնայեց:

Չի կարելի պնդել, թե Մամոն արվեստից չէր հասկանում . նա, կարելի էր ասել, սուր կերպով ընկալում էր այն, ինչ բնորոշ էր տվյալ գործում . նա, օրինակի համար, հիացավ Տոլստոյի միրուքով, Շեվչենկոյի բեղերով և նայելով Նիցշեի կերպարանքին, աջ ափը խփեց ձախ ձեռքի ափին և մանկական հրճվանքով բացականչեց .

— Բա՛խ, բա՛խ, նա՞ սարթ ադամ դրր . . . Տես, տես, ինչ թունդ, այսինքն՝ բարկացած մարդ է . . .

Մամոն դուրս եկավ տաշտից՝ տեղը զիջելով ինձ, մոտեցավ Աշոտ դայուն և ինչ-որ բան ասաց նրան: Աշոտ դային կանգնեցրեց անիվը, լսեց նրան և գլուխը բանիմաց ու դրական շարժեց: Հետո վեր կացավ իր տեղից, ոչինչ չասող կամ գուցե մի շատ կարևոր բան ասողի աչքերով նայեց ինձ և մտավ չորանոց: Հետո ես լսեցի, որ նա մյուս դռնով դուրս եկավ, հետո . . .

Աշոտ դային ներս մտավ մեծ հաղթանակ տարած մարդու ժպիտով, այս անգամ օրինական դռնից, ձեռքին մի թրծած, բայց գործածված ամաններից մեկը: Մամոն ուրախ ընդառաջեց նրան և երկու ձեռքով վերցրեց ամանը, քայլեց դեպի Լյուդմիլան: Ես մի աչքով նայեցի հողե ամանի խորհրդավոր բովանդակությանը: Մի բուռ թթու կաղամբ . . .

Լյուդմիլան վերցրեց այն և անհամբեր իրեն նետեց չորանոցը:

— Խեղճ կին, — ասաց Մամոն քնքշալի ձայնով, — սիրտը թթու է ուզում . . .

Աշոտ դային չպատասխանեց, նա հազաց առանց բերանը բանալու, քթի մեջ, իր հայտնի հազով:

— Ի՞նչ պիտի լինի, Մամո՛, — հարցրեց նա մտահոգ շշուկով . կարծես գերմանուհին կարող էր լսել և եթե լսեր, կարող էր հասկանալ Մամոյի մայրենի լեզուն:

Մամոն երկու ձեռքը բարձրացրեց դեպի բրուտանոցի սևացած առաստաղը և բացականչեց .

— Ալլա՛հ . . .

Այսինքն՝ թող աստված տնօրինի, դա մեր՝ մահկանացուներիս գործը չի, ու դեռ այսինքն՝ աստվա՛ծ, դո՛ւ թեթևացնես այս ծանր փորձությունը:

Փորձությունն, իհարկե, ծա՛նր էր, բայց ոչ այնքան ճակատագրական: Ճամբարի պետը գլխավոր բժիշկ Տրախտենբրոտին սպառնացել էր ինչ-որ «խեցգետինների ձմեռանոցով», ուր պիտի թոչեր, իր ասելով՝ Տրախտենբրոտի հետ միասին, եթե . . .

Այս գործում էլ, պիտի ասել, Մամոն առաջիններից չէր: Անդրանիկության պատվին արժանացավ օսեթ Նեստոր Կուլանը, որը կապվեց, բանաստեղծի ասածի նման, Երուսաղեմը չտեսած մի երուսաղեմցի աղջկա, տվյալ դեպքում կնոջ, այսինքն՝ հրեհուհու հետ: Կուլանն աշխատում էր գրասենյակում, որպես հաշվապահ: Նա ապահովված մարդ էր, լավ ծանրոցներ էր ստանում և գիտեր իր գինը: Մի անգամ նա պաշտոնական թույլտվությամբ և պաշտոնական գործով մտավ կանանց գոտին՝ ստուգելու համար պետական աղյալների որպիսությունը: Պետին տեղեկություններ էին հասել, որ կալանավորուհիներից ոմանք աղյալներից շերտեր են կտրում և փաթաթում ոտներին: Կուլանը եղավ առաջին և երկրորդ բարաքներում, ավագուհիների օգնությամբ հայտնաբերեց թվով յոթ ոչ լիարժեք աղյալներ, գրեց տերերի անունները . . .

Երկրորդ բարաքում նրա ուշադրությունը գրավեց նուրբ դիմագծերով և թուխ աչք-ունքով մի կին: Նա աղյալը քաշել էր մինչև վիզը և պառկած կոնակին, բաց աչքերով, ինչպես երևում է, երազում էր: Երբ Կուլանը ավագի հետ հերթով նայելով բացակա կալանավորների աղյալները, հասավ նրան, ավագը շշնջաց .

— Կարիք չկա ստուգելու . . . նա այդպիսի բան չի անի . . .

Կուլանը բարձրացրեց իր սև, խիտ հոնքերը և ակնոցների վրայով նայեց պառկածին: Բարակ ժպիտի նման մի բան անցավ կնոջ դեմքով:

— Հիվա՞նդ եք, — հարցրեց Կուլանը:

— Պաշտոնապես՝ ոչ, — պատասխանեց կինը, և նրա ժպիտն ավելի տեսանելի դարձավ:

— Իսկ . . . ոչ պաշտոնապե՞ս:

— Ավելի քան հիվանդ:

— Տաքությո՞ւն . . .

— 37-ից չբարձրացավ, դրա համար էլ Ժոզեֆինա Էռնեստովնան . . . իսկ ես որոշեցի մնալ՝ թեկուզ 300 գրամ օրաբաժնի վրա:

Ավագուհին խոսակցությունն ավարտված համարեց և երկու քայլ առաջ շարժվեց . Կուլանը չշարժվեց տեղից:

— Ո՞րտեղացի եք, — հարցրեց նա:

— Թիֆլիսից, — պատասխանեց կինը:

— Թիֆլիսի՞ց, — ուրախացավ Կուլանը, — իսկ ես Վլադիկավկազից եմ կամ, ինչպես հիմա են ասում, Օրջոնիկիձեից . . . Մենք հայրենակիցներ ենք, ինչպես տեսնում եք:

— Ճիշտ է, — աղյալի տակ շարժվեց կինը, — մեզ բաժանում է ընդամենը Ռազմավարական ճանապարհը . . . մի ուրիշ կողմից մենք ավելի մոտ ենք . . . մենք կոլեգաներ ենք . . . Ես աշխատում էի Թիֆլիսի պետական բանկում . . .

— Այո՞, հաշվապահուհի՞ . . .

— Чудесно, — բացականչեց Կուլանը, — հրաշալի է:

— Հրաշալին վերջացավ այն օրը, երբ իմ ամուսնուն գնդակահարեցին, իսկ ինձ . . . ավելի լավ կլիներ, եթե ես բանվորուհի լինեի: Չնչին բացառությամբ՝ ինտելիգենցիան ճամբարներում ոտքի տակ է գնում: Երևի նկատած կլինեք:

— Լա՛վ, լա՛վ, — արձագանքեց Կուլանը ոչ այնքան իր կոլեգային, որքան իր մտքերին, — առողջություն եմ ցանկանում . . .

Նա ուզեց ավելացնել, — մի՛ մտածեք, մի բան կանենք կամ նման մի բան, բայց միտքը փոխեց և հարցրեց, — ներեցեք, ձեր անուն-ազգանո՞ւնը . . .

— Նինա Միլլեր, — ժպտաց կինը և ավելացրեց, — Բենյամինովնա:

Կուլանը ձեռքի խավաթղթի մի անկյունում գրեց իր ապագա . . . ասենք՝ օգնականի անուն-ազգանունը, հայրանունը, ցտեսություն ասաց և ավագանուհու հետ վերջապես առաջ շարժվեց:

Մի քանի օր հետո Նինա Միլլերը հայտնվեց գրասենյակում և տեղ գրավեց Կուլանի դեմ-դիմաց դրված սեղանին: Այս կարևոր երևույթը բոլորը նկատեցին, բայց ոչ ոք չնկատեց, որ Կուլանի վերջին ծանրոցով ստացված՝ բրդից գործված ձյունասպիտակ սվիտերը երևաց ճամբարի պետի վրա, իսկ կարգադրիչ Սիդորովը մի քանի օր կծու մախորկայի փոխարեն «Աբխազիա» ծխախոտ ծխեց:

. . . Մայիսի վերջերից մինչև օգոստոսի վերջը փակվում է գործարար բակը, և բոլորի հետ արհեստավորներն էլ դաշտ են դուրս գալիս: Այս ժամանակահատվածում խտացված են գարնանային, դաշտային աշխատանքներն ու բերքահավաքը: Ուշ են տալիս հողին և շուտ հավաքում Սիբիրում, ուշ ցանում, շուտ հնձում: Սիբիրի հողը ճարպոտ է ու արգավանդ, արևը՝ հրաշագործ: Ուրիշ գոտիների վեցամսյա աշխատանքն այստեղի հողն ու արևը կատաղի լարումով գլուխ են բերում երեք, երեք ու կես ամսում:

Սակայն գործարար բակի արհեստավորների դաշտ դուրս գալը չէր բարձրացնում այն աղմուկն ու աղաղակը, ինչ բարձրանում էր, երբ գրասենյակի պաշտոնյաներին էին դաշտ հանում: Նրանք հագնվում էին քիչ թե շատ քաղաքավարի, ունեին դեմքի ավելի հանգիստ արտահայտություն, շարք էին կանգնում պատրաստական, վայելուչ, մինչև անգամ հանդիսավոր, ինչպես ժամերգություն լսելիս:

— Եկան Լոմոնոսովի թոռները . . .

— Երևի գրիչ ու մատիտ են վերցրել հետները . . .

— Գրիչ ու մատիտ չի անցնի, տափան կտան ձեռները . . .

Ինտելիհե՛նցիա . . .

Ավելի խոհեմները մտածում էին, որ ուշ թե շուտ՝ միևնույն է, նրանք էլի կանցնեն իրենց պարտականությունների կատարմանը, և իրենք ստիպված պիտի լինեն նորից նրանց դիմել զանազան խնդրանքներով, այդպիսիք զգաստանում էին, լռում, անգամ սաստում, որ ծաղրողները լեզուները կարճ պահեն:

Դաշտային աշխատանքներից ավելի ձեռնտու աշխատանք էր համարվում այսպես կոչված՝ ստաններում աշխատելը: Կային թվով երեք ստաններ, ուր կենտրոնացվում էր հացահատիկը խոտով ծածկված ծածկերի տակ: Կալանավորներն այնտեղ զբաղվում էին հացահատիկների տասնյակ երկար, հսկայական շեղջերը թիակներով էրանելով, որ չայրվեն, ինչպես նաև սերմնազտումով: Կալանավորները ձեռքով աշխատեցնում էին մի քանի սերմազտիչներ, ուրիշները զտված ցորենը լցնում էին «չափերի» մեջ և երկու հոգով տանում մոտակա ամբարը: Բեռը հրում է . — գնա՛ . . .

Ստաններում աշխատելը լավ էր նրանով, որ անձրևոտ օրերին կալանավորները չէին աշխատում անձրևի տակ, ինչպես դաշտում . նրանք պաշտպանված էին անձրևից . բացի այդ ստաններում աշխատողները ճաշի միժամյա հանգիստը վայելում էին ոչ թե արևի կամ անձրևի տակ, թաց հողի վրա, այլ ծածկերի տակ կիտված խոտերի մեջ:

Հոգնատանջ աշխատանքի ընթացքում, երբ օրը կիսվում էր, երբ մարդկանց երակներում արյան փոխարեն թվում էր, թե հոսում է հոգնության թույնը, հեռու տեսնող այս կամ այն կալանավորը մի րոպեով դուրս էր գալիս ծածկի տակից այնպես, որ պահակները չնկատեին, նայում էր ճամբարից ստան սողացող դաշտային ճանապարհին, ստուգելու համար, թե ճաշը գալի՞ս է: Երբ հեռվում նկատում էր շարժվող մի կետ, ականջից-ականջ ու սրտից-սիրտ, շշուկով անցնում

էր համբավը, — գալի՛ս է, ճաշը գալի՛ս է . . .

Դաշտի մեծ ճամփով առաջ էր շարժվում կյանքից ակնհայտ կերպով ձանձրացած, հոգնած մի երիվար՝ քարշ տալով միջնադարյան մի սայլակ, սայլակի վրա՝ մի մեծ տակառ: Ձին վարում է խոհարարի օգնականը, իսկ կողքից քայլում է ձիուն նստած զինված պահակը: Երբ ճաշը տեղ է հասնում, բրիգադիրի հրահանգով ընդհատվում է աշխատանքը, կալանավորներն իրենց տոպրակներից դուրս են քաշում Աշոտ դայու թրծած ամանները, ով հերոս է՝ մի կտոր հաց է պահել դեռ, և հերթի են կանգնում:

Բալանդյորի շերեփը, պետք է ասել, արդար է ու անաչառ, դա մեկ լիտրանոց պաշտոնական չափ է և նա պարտավոր է տալ լրիվ: Սա խնդրի, այսպես ասած արտաքին, ձևական կողմն է, գալով շերեփի որակին, այսինքն բովանդակությանը . . . այդ արդեն կախված է ամենակարող բալանդյորի ճարպիկ ձեռքից: Իսկ բալանդյորը Մշարն է, ասում են՝ նա Ամերիկայում եղել է, ասում են, սեփական էլեկտրաաղաց է ունեցել, բայց այդ ի՞նչ կարևոր է, կարևորն այն է, որ նա կալանավորների մեջ ունի բարեկամներ, ոչ բարեկամներ, անծառթներ: Ինչպե՞ս նա կարող է սայլի բարձրունքին կանգնած՝ ճաշը բաժանել առանց նայելու, թե պարզված հերթական ամանի մեջ ո՞վ է, ինչացու է . . .

Պրոֆեսոր Եֆրեմինը կուլ է տալիս վերջին գդալ ապուրը . Նա ամանը տեղավորում է տոպրակում, տոպրակը կախում է ծածկի սյունի մեխերից մեկից, նստում է ճարտարապետ Սասի մոտ և շրթունքները ծփծփացնելով ասում .

— Հիմա չէր խանգարի մի լավ ճաշել . . .

— Ես էլ ճիշտ ձեր կարծիքին եմ, Ալեքսանդր Եֆրեմովիչ, — հորանջում է Սասը, և տիրում է լռություն:

Հետո անձրևն է խշշում ասես ամբողջ աշխարհի վրա: Այստեղ-այնտեղ ծածկն սկսում է կաթկթել: Կալանավորները ննջում են խոտերին պառկած: Իսկ դաշտում հիմա անձրևի տակ են կալանավորական բրիգադները:

— Այս անձրևի խշշոցը լսելու և հնձած խոտի բուրմունքը շնչելու համար թեկուզ արժեր աքսորվել, — ասես քնի մեջ խոսում է նորից պրոֆեսորը:

Սասը խայթվածի պես վեր է թռչում և նայում Եֆրեմիչի դեմքին, — լո՞ւրջ է խոսում, թե ցնդել է ծերուկը: Իսկ ծերուկը մշմշում է հետճաշյա անուշ նինջով:

Պակաս երջանիկ չեն և այն բրիգադները, որոնք ընկնում են կարտոֆիլի ամբարների վրա, որոնք նման են լաբիրինթոսների, ունեն զանազան մուտքեր և ուր տիրում է ադամամութը: Այս այն պատճառով, որ ամբարները նկուղային են և պատուհաններից լցված կարտոֆիլի հսկայական շեղջերն արգելում են լույսի մուտքը: Կալանավորները հերթով «իջեցնում են» կիտվածքները լույս ստանալու և աշխատելու համար, որը կայանում է տեսակավորման, միաժամանակ փչացածները ջոկելու մեջ:

Կալանավորներն այստեղ իրենց ստամոքսները լցնում են հում կարտոֆիլով, ուտում ախորժակով, ինչպես խնձորն են ուտում: Այս կատակոմբում մի ուրիշ դռնից կարող է ներս մտած լինել կանանց բրիգադիրը, և հնարավոր է, որ նրանցից ոմանք մութ մի խորշում իրար հանդիպեն: Նման դեպքերում նրանք կույրերի նման շոշափում են իրար և առանց քաշքշուկի չեն խնայում սեր ու փաղաքշանք: Նման հանդիպումների անպատեհությունն այն է, որ աշխատանքի ավարտից հետո, երբ բրիգադները դուրս են գալիս տարբեր դռներից և առանձին-առանձին շարքի կանգնում, աստծո լույսի տակ նրանք դիտում են իրար և ոչ մի կերպ չեն կարողանում գուշակել կամ գտնել, թե ո՞րն է իրենց նորից բանաստեղծի լեզվով ասածի պես՝ «վերջինը թյուրիմացաբար և միա՞կը ճակատագրով . . .»: Այո՛:

Դաշտում, ստաններում թե կարտոֆիլի կատակոմբներում՝ ընդհանուր աշխատանքների վրա՝ Աշոտ դայու կավամանների նման թրծված կալանավորները չարախնդությամբ էին նայում «ինտելիհենցիայի» անվարժ, քրտնաթոր աշխատանքին, իսկ Աշոտ դային, որի համար ամեն տեսակ ֆիզիկական տքնություն խաղ ու պար է, սիրով օգնում էր գրեթե բոլորին . նա ավելի մոտ էր Նեստոր Կուլանին, որը մի անգամ դաշտային ընդհանուր աշխատանքի հետճաշյա հանգստին պատմեց իր սիրո պատմությունը:

Իսկ հետո՞, ի՞նչ պատահեց հետո:

Պատահեց այն, ինչ մարդկային տրամաբանությամբ և բնական օրենքով պետք է պատահեր . Նինա Բենյամինովնան ծանրացավ: Այս խնդրում ուրիշ էին, սակայն, ճամբարային տրամաբանությունն ու օրենքը . պատահածը ոչ այլ ինչ էր, եթե ոչ օրենքի խախտում, զանցանք ու հանցանք: Ճամբարը, հատկապես կանանց գոտին, շունչը պահած, անհամբեր սպասում էր, թե ինչ պիտի լինի հետո:

Հետոն չուշացավ:

Նինա Միլլերը չէր ծածկում իր դրությունը, քիչ է ասել՝ չէր ծածկում . նա ամեն օր, որոշված ժամին, պահակների հեգնական նայվածքների ուղեկցությամբ մտնում էր տղամարդկանց գոտին և ընդգծված, հպարտ քայլերով դիմում էր դեպի գրասենյակը: Ինչ խոսք, եղան և բամբասողներ, չարախինդ մարդիկ երկու սեռից էլ, բայց ավելի մեծ էր թիվն այն կալանավորների, որոնք պատրաստ էին կնքահայրեր ու կնքամայրեր դառնալ մարդկային սիրուն, ողբերգական պայմաններում շունչ ու հոգի առած ապագա նորածնին, եթե ամեն ինչ բարեհաջող ընթանար . . .

Ավա՛ղ, բազմաթիվ անձնուրաց ու անձնվեր կնքահայրերն ու կնքամայրերը բախտ չունեցան տեսնելու իրենց սանիկին: Ի՞նչ կնքահայր, երբ հարազատ հայրն անգամ չկարողացավ տեսնել իր նորածին որդուն . . . Մի անձրևոտ օր Նինա Միլլերին հրամայվեց հավաքել իրերը: Սառնարյուն և հավասարակշիռ Նեստոր Կուլանը կորցրեց իրեն: Նրան հաջողվեց մի քիչ փող, խոզի ճարպ և մի քանի կտոր շաքար խոթել Նինա Միլլերի գրպանը: Հսկողության տակ ճամբարից հանեցին և տարան Նինա Միլլերին: Գրասենյակում տիրում էր լռություն: Ոչ ոք չէր աշխատում: Կուլանը, նստած իր տեղում, ծխում էր և մեկ-մեկ կոկորդն էր մաքրում, հուզմունքը ծածկելու համար երևի: Ներս մտավ պահակը: Դռների մոտ նա կանգնեց, չգիտես ինչու, խոր շունչ քաշեց և նայեց բոլորին, ուշադիր ու գործնական:

— Կուլա՛ն, — արտասանեց նա:

— Ես եմ: — Ոտքի կանգնեց Կուլանը:

— Գնացինք, — պահակը մի կողմ քաշվեց, որպեսզի կանչվածն առաջ ընկնի:

— Ո՞ւր, — այնուամենայնիվ, համարձակվեց հարցնել նա:

— Ուր հրամայված է:

— Իրերը . . . հավաքե՞լ:

— Առանց իրերի:

Կուլանն ընկավ պատժախուց: